



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Օգոստոս 23, 1994

Արժանաշնորհ
Տ. Տիրան Ա. Քհնյ. Փափագեան
Այցելու Հովիտ Ա. Յովակիմ եւ Աննա Եկեղեցոյ
Փէյրս Հայթց.

Սոյն թուականի Յուլիս 17-ի Կիրակի օր՝ Ծիգակոյի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ մէջ
իմ ղեկավարութեամբ եւ մեծ յաջողութեամբ երգեցունցաւ Ա. Պատարագը, որուն իրենց
մասնակցութիւնը բերած էին Ծիգակոյի Ա. Գրիգոր Լուսաւորիչ, Էվնըսթընի Ա. Յակոբ եւ Փէյրս
Հայթցի Ա. Յովակիմ եւ Աննա Եկեղեցիներու դպրաց դասերու անդամները:

Յաւարտ Ա. Պատարագի՝ երգեցողութեան մասնակցողներուն կողմէ ցանկութիւն յայտնուեցաւ
որ Սեպտեմբեր 25-ի եւ Հոկտեմբեր 2-ի Կիրակի օրերը, իմ ղեկավարութեամբ, միացեալ այս
դպրաց դասերու անդամները մասնակցին Ուոքհիլընի Ա. Գեորգ Եկեղեցոյ 35-ամեակի եւ
Ծիգակոյի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ 30-ամեակի տարեդարձներուն առթիւ մատուցուած Ա.
Պատարագներուն:

Արտայայտուած այս գեղեցիկ ցանկութիւնը արժանացաւ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք.
Պարսամեանի հաւանութեան, եւ ինձի յանձնարարուեցաւ որ այս գաղափարի իրագործման համար
դիմե՛մ ձեզի՝ որպէս զի դուք եւս, եթէ յարմար գտնէք, ձեր համաձայնութիւնը յայտնէք:

Կը խնդրեմ որ բարեհաճիք այս մասին տեղեկացնել ինձի:

Յարգանքներով

Խորեն Մէլիսանչեան